Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2019թ. դեկտեմբերի 11-ի թիվ 27/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի փետրվարի 7-ի N 2/10 որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանք: Հաշվեքննությունն իրականացվել է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» Եվրոպական միության բյուջետային աջակցության թիվ ԵՀԳ/2015/038-229 համաձայնագրի պահանջով:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության ծառայություն»
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019 թվականի փետրվարի 7-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ և ութերորդ վարչությունների կողմից, (այսուհետ՝ Հաշվեքննող), որոնց աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Արա Նռանյանը: Հաշվեքննության ողջ ընթացքում հաշվեքննողներին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ցուցաբերվող աջակցության ծրագրի շրջանակներում հրավիրված փորձագետ՝ որա-կավորված աուդիտոր Գագիկ Գրիգորյանի կողմից:

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ծրագրերի կատարման վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) և Ծառայության կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծառայության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանի:

Ծառայության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարության կարծիքով թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվության և օրենքներին ու իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները» «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները» և «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական

խեղաթյուրումներից, իսկ ծրագրերի կատարումը՝ էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ աուդիտորական ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և Ծառայության կողմից ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմք

1. Հաշվեքննության իրականացման ընթացքում Հաշվեքննողը սահմանափակ տեղեկատվության պատճառով հնարավորություն չի ունեցել ուսումնասիրել հետևյալ ուղղությունները.
   - ՀՀ և Արցախի Հանրապետության միջև 2017 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված թիվ 1220-Ագ Հուշագրով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շահառուներին վճարված կենսաթոշակներ՝ 6,510,535.8 հազ. ՀՀ դրամ գումարով՝ շահառուների ցանկի բացակայության պատճառով,
   - Քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների և հոգեբուժական բժշկական կազմակերպություններում բուժում ստացող անձանց վճարված կենսաթոշակի գումարները՝ շահառուների նույնականացման հնարավորության բացակայության պատճառով:

2. Հաշվեքննության իրականացմամբ պարզվել է, որ հաշվեքննվող ժամանակահատվածի ընթացքում առկա են դեպքեր, երբ համաձայն սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (այսուհետև՝ ՍԷԿՏ) համակարգի տվյալների բազայի և կենսաթոշակների վճարման էլեկտրոնային տվյալների բազայի համադրումների արդյունքում՝
   - երկրից 12 ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակի շահառուներին փաստացի վճարվել է անկանխիկ եղանակով 3,003,416,855 ՀՀ դրամ, կանխիկ եղանակով՝ 1,781,197,011 դրամ,
   - երկրից 3-ից 9-ը ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակի շահառուներին կանխիկ եղանակով փաստացի վճարվել է 3,945,015,023 ՀՀ դրամ:

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի, կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով ներկայանալ բանկ, իսկ 5-րդ մասի համաձայն կանխիկ եղանակով կենսաթոշակի գումարի տրամադրումը կատարվում է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

Օրենքի պահանջի և ՍԷԿՏ համակարգի տվյալների բազայի համադրման արդյունքում առաջանում է ռիսկ, որ աշխատանքային կենսաթոշակի շահառուները, որոնք պահանջվող ժամանակաշրջանի ընթացքում չեն ներկայացել համապատասխան կառույց, ստացել են աշխատանքային կենսաթոշակներ, այն դեպքում երբ դրանք ենթակա են եղել դադարեցման:

Հաշվի առնելով, որ Ծառայությունում բացակայում են տվյալ շահառուների սահմանահատումների ամսաթվերի ճշգրիտ տվյալները, Հաշվեքննողը վերոնշյալ գումարների մասով հնարավորություն չի ունեցել ձեռք բերել անհրաժեշտ և բավարար ապացույցներ, հավաստիանալու համար, որ տվյալ գումարները ճշմարիտ են և արժանահավատ:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ ‘Ոչ լիարժեք եզրահանգման հիմք’ պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝

- Ծառայության ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Ծառայության կողմից ծրագրերի կատարման վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա

ֆինանսական հաշվետվությունը, պատրաստված ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանի համաձայն:

- Ծառայության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կատարված ծրագրերը, բոլոր էական առումներով, համապատասխանում են իրավական ակտերին և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Արա Նռանյան՝
ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ
09 դեկտեմբեր 2019 թվական
ՀՀ Հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվեքննության շրջանակներում պարզվել է, որ 2018 թվականի պետական բյուջեով Ծառայության կողմից սոցիալական ապահովության ծրագրերով նախատեսվել է հատկացնել 339,323,752.3 հազ. դրամ: Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի մասով տարվա ընթացքում տարեկան բյուջեում, համաձայն ՀՀ կառավարության 15.03.2018թ. N258-Ն, 12.04.2018թ. N444-Ն, 15.11.2018թ. N1314-Ն, 20.12.2018թ. N1488-Ն որոշումների կատարվել են վերաբաշխումներ (ավելացում՝ 10,497,054.2 հազ. դրամ, պակասեցում՝ 3,400,574.4 հազ. դրամ), որի արդյունքում 2018թ. տարեկան բյուջեն ավելացել է 7,096,476.8 հազ. դրամով և կազմել 346,420,229.1 հազ. դրամ: Առավելագույն չափով՝ 8,334,593.4 հազ. դրամ գումարով ավելացել են «Աշխատանքային կենսաթոշակներ» բյուջետային ծրագրին հատկացվող միջոցները: 2018թ. տարեկան ծրագրերով կատարողականը կազմել է 341,876,139.2 հազ. դրամ, ինչը կազմել է ճշտված բյուջեի 98.7%-ը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

հազ. դրամ

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն		**339,278,896**	**346,420,229**	**341,876,139**	**341,661,303**
01010305	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	-	**639**	**639**	**639**
04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմիցդիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռներիև որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	-	**1,367**	**1,367**	**1,367**
08020506	«Ժողովրդական» պատվավոր կոչման	**42,240**	**37,880**	**35,440**	**35,440**

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	արժանացած անձանց ամենամսյա պատվովճար				
08020511	«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայություններ	**422**	**192**	**170**	**170**
10010101	Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում	**81,880**	**76,554**	**75,950**	**75,950**
10020101	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	**24,639,171**	**26,379,794**	**26,316,458**	**26,143,110**
10020102	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	**567,112**	**549,900**	**549,900**	**549,900**
10020103	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ	**13,508,477**	**13,587,477**	**13,587,347**	**13,587,347**
10020104	ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ	**2,648,635**	**2,668,635**	**2,635,454**	**2,635,454**
10020109	Աշխատանքային կենսաթոշակներ	**210,470,915**	**218,805,509**	**218,782,087**	**218,782,087**
10030101	Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի	**159,000**	**160,459**	**159,747**	**159,747**

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	ընտանիքի անդամներին տրվող պարգևավճար				
10030102	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	**4,907,200**	**4,749,144**	**4,401,915**	**4,401,915**
10040102	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	**39,498,347**	**37,268,698**	**34,542,958**	**34,542,958**
10040103	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	**2,841,048**	**2,841,048**	**2,756,491**	**2,756,491**
10040105	Մայրության նպաստի վճարում	**10,253,736**	**10,555,516**	**9,786,148**	**9,786,148**
10040106	Երեխայծննդյան միանվագ նպաստ	**9,977,250**	**9,969,450**	**9,868,642**	**9,868,642**
10070101	Վետերանների պատվովճարներ	**271,200**	**262,689**	**259,990**	**259,990**
10070104	ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում	**11,668,942**	**11,124,127**	**11,050,841**	**10,936,518**

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
10070106	«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդներիդիմաց փոխհատուցում	**1,200,000**	**1,200,000**	**1,030,865**	**1,030,865**
10090101	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններիպահպանում	**2,082,231**	**2,053,944**	**1,983,561**	**2,037,395**
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալականփաթեթով ապահովում	**-**	**38,835**	**37,823**	**37,823**
10090205	Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ	**1,439,073**	**1,439,073**	**1,417,343**	**1,417,343**
10090207	Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում	**2,501,916**	**2,147,409**	**2,129,807**	**2,129,807**
10090208	Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն	**11,016**	**248**	**-**	**-**

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
10090209	Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն	**1,102**	**388**	**388**	**388**
10090211	Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվականհամակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ	**7,000**	**7,000**	**-**	**-**
10090213	Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ	**42,000**	**42,000**	**42,000**	**42,000**
10090214	Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկում	**22,000**	**22,000**	**22,000**	**22,000**
10090215	«ՎՏԲ- Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայություններ	**12,000**	**12,841**	**11,309**	**11,309**
10090216	Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների ևՄարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի	**1,590**	**790**	**647**	**647**

Ծրագրերի անվանումները		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	ընտանիքիանդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայություններ				
10090217	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ	**394,984**	**394,984**	**375,200**	**375,200**
10090218	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայություններ	**28,411**	**19,889**	**13,653**	**13,653**
11010101	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	**-**	**1,752**	**-**	**19,000**

I. ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

Կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել և, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջը, արձանագրությունների տեսքով ներկայացվել են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Ծառայությանը, որոնց վերաբերյալ ներկայացված պարզաբանումները և բացատրությունները էականորեն չեն տարբերվում արձանագրված ռիսկերի մասով մեր կողմից տրված գնահատականներից:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննության օբյեկտ չհանդիսացող մարմիններում ևս հայտնաբերվել են անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ այն ծրագրերում, որոնց ֆինանսավորման համար կարգադրիչը Ծառայությունն է: Այս հայտնաբերված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները տվյալ ընթացիկ եզրակացության մեջ ներկայացվել են ըստ համապատասխան կառույցների:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում Հաշվեքննողի կողմից կատարվել է բյուջետային հայտով նախանշված քայլերի իրականացման ուսումնասիրություն: 2018թ ուսումնասիրության արդյունքներից պարզվել է.

- չհիմնավորված փաստաթղթերի հիման վրա աշխատանքային ստաժի հաշվարկման գործընթացում առկա ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունքում նախատեսվում էր աշխատանքային ստաժի տևողության կրճատում, ինչը պետք է հանգեցներ 3.0 մլրդ դրամ բյուջետային միջոցների տնտեսմանը,
- կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցողների թվաքանակը կանխատեսվել է նվազեցնել 16,811 անձով, որից շուրջ 11,000-ը՝ հաշմանդամության սահմանման չափորոշիչների խստացման արդյունքում, իսկ շուրջ 6,000-ը՝ համաձայնագրի

մասնակից պետությունում կրկնակի կենսաթոշակ ստացողների հաշվին: Կանխատեսվող խնայողության արդյունքը պետք է կազմեր 9.0 մլրդ դրամ,

- վարչարարության ուղղությամբ իրականացվող քայլերը պետք է հանգեցնեին պետական բյուջեի միջոցների շուրջ 1.0 մլրդ դրամի խնայողության:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ փաստացի աշխատանքային կենսաթոշակ ստացել են 436,073 անձ՝ այսինքն 9,522 անձով պակաս, մինչդեռ փաստացի հատկացված գումարը ոչ միայն չի նվազել, այլ ավելացել է 8,334,593.4 հազ. ՀՀ դրամով՝ հասնելով 218,805,508.8 հազ. դրամ: Իսկ ավելացման նպատակով լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջը Ծառայության կողմից պատճառաբանվել է 18,556 շահառուների համար կենսաթոշակի ապահովումով, մինչդեռ իրականում դա փաստացի բոլոր 436,073 կենսաթոշակառուներին վճարման ենթակա գումարների պակասուրդն է:

Այսպիսով, բյուջետային հայտով նախատեսված միջոցառումները արդյունավետ չեն և չեն ծառայել իրենց առջև դրված նպատակներին, իսկ անհամապատասխանությունները ձևավորվել են պլանավորման ժամանակ ոչ հստակ ցուցանիշների կիրառման, իրականացվող ոչ արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու արդյունքում:

Առաջարկ

Մշակել և հաստատել ՀՀ պետական բյուջեի պլանավորման հստակ ցուցանիշներ և հաշվարկման մեթոդաբանություն, ինչը հիմնված կլինի կանխատեսելի (ակտուարական) հաշվարկների վրա:

Ղեկավարության արձագանք

Նախորդիվ, ի պատասխան Հաշվեքննիչ պալատի 2019 հուլիսի 19-ի N ՀՊԵ-ԱՆ-111 գրությամբ բարձրացված հարցադրումների՝ Ծառայության 21.08.2019թ. թիվ 01/14-4/18578, 19.09.2019թ. թիվ 01/12-1/22172-2019, 11.10.2019թ. թիվ 01/16/24294-2019, 24.10.2019թ. թիվ 01/14-2-1/25283-2019, 29.10.2019թ. թիվ 01/04/25501-2019 գրություններով ներկայացվել են Ծառայության բացատրությունները և առկա տեղեկատվությունը՝ 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտի, 2018-2020 թվականների հաստատված միջնաժամկետ ծախսային ծրագրերով կրճատված գումարների, 2018 թվականի բյուջետային հայտի, հաշվարկ-հիմնավորումների, 2018 թվականի հաստատված բյուջեի հետագա ճշգրտումների (վերաբաշխումների), ինչպես նաև նախատեսված միջոցառումների ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես հայտնել ենք նախորդիվ, ՀՀ պետական բյուջեի պլանավորումը տարեկան և միջնաժամկետ կտրվածքով իրականացվում է ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն՝ հիմք ընդունելով շահառուների թվաքանակի դինամիկան և մեթոդական ցուցումներով նախատեսված այլ ցուցանիշներ, ինչպես նաև այդ ցուցանիշների հավանական փոփոխությունները՝ պայմանավորված քաղաքականության փոփոխություններով:

Ընդ որում, վերը նշված փոփոխություններով պայմանավորված՝ բյուջետային գործընթացի շրջանակներում իրականացվում են հիմնական ցուցանիշների հաշվարկ-կանխատեսումներ:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ հաշվարկ-կանխատեսումներն իրականացվում են ոչ թե փաստացի դրամական վճար ստացողների թվի, այլ՝ դրամական վճարներ (կենսաթոշակ, նպաստ և այլն) ստանալու իրավունք ունեցող անձանց թվի վերաբերյալ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության հիման վրա:

Բյուջետային տարվա ընթացքում տնտեսումներ կամ խնայողություններ ձևավորվելու կամ լրացուցիչ միջոցների պահանջ առաջանալու դեպքերը (հավանականությունը) նախատեսված են բյուջետային օրենսդրությամբ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ ցանկացած կանխատեսում կարող է շեղվել փաստացի իրողություններից:

Այնուամենայնիվ, ընդունելով բյուջեի պլանավորման հետ կապված արձանագրված խնդիրները՝ Ծառայությունը ձեռնամուխ է լինելու առկա իրավակարգավորումների շրջանակներում սահմանել (մշակել) Ծառայության կողմից իրականացվող ծրագրերի հաշվարկման մանրամասն մեթոդաբանությունը:

Անդրադառնալով 2018 թվականի բյուջետային գործընթացին, հայտնում եմ, որ 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտով, հիմք ընդունելով պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա, այդ թվում՝ հաշվառված՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, 2018 թվականի ընթացքում աշխատանքային կենսաթոշակները ֆինանսավորելու համար անհրաժեշտ միջոցները հաշվարկվել են 466 170 անձի համար՝ 225,719,459.1 հազ.դրամ գումարով:

Սակայն, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում, մի շարք բյուջետային ծրագրերի գծով տեղի են ունեցել փոփոխություններ՝ շահառուների քանակի և ֆինասական միջոցների

կրճատումներ, որի հետևանքով աշխատանքային կենսաթոշակ ծրագրի ֆինանսավորման համար հատկացվել է 445 595 անձի հաշվարկով 210,470,915.4 հազ.դրամ՝կանխատեսված 466 170 անձի և 225,719,459.1 հազ.դրամ գումարի փոխարեն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2^2-րդ մասի համաձայն՝ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված ծրագրերն իրենց հաշվարկ-հիմնավորումներով արտացոլվել են 2018 թվականի բյուջետային հայտում:

Ինչպես հայտնի է վերը նշված կրճատումների համար հիմք են հանդիսացել մի շարք կանխատեսումային միջոցառումների իրականացումը, որոնք կարող էին հանգեցնել բյուջետային միջոցների տնտեսմանը: Դրանց իրականացման ուղղությամբ կատարվել ենորոշակի աշխատանքներ, որոնց մասին առավել մանրամասն ներկայացվել է նախորդիվ: Սակայն ձեռնարկված միջոցառումները, որոնք վերաբերել են չհիմնավորված փաստաթղթերի հիման վրա աշխատանքային ստաժի հաշվարկման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելուն, միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում և կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական պայմանագիր կնքած այլ պետությունում կենսաթոշակ ստանալու դեպքերը բացահայտելուն, վարչարարության խստացմանը՝ չեն հանգեցրել սպասվող արդյունքի: Նշվածի հետևանքով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1314-Ն որոշմամբ կատարվել են համապատասխան վերաբաշխումներ և Կառավարության պահուստային ֆոնդի, ինչպես նաև Ծառայության որոշ ծրագրերի («Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ», ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող պարգևավճարներ» և այլն) տնտեսումների հաշվին Ծառայությանը լրացուցիչ հատկացվել է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի համար՝ 8,764,593.4 հազ.դրամ, «Սպայական անձակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրի գծով՝ 1,740,623.3 հազ. դրամ:

Ընդ որում, ինչպես նշել ենք նախորդիվ՝ Հաշվեքննիչ պալատին ուղղված գրություններով, Արձանագրության մեջ նշված՝ 18 556 շահառուների թվաքանակը, գոյացել է որպես կանխատեսումային՝ թվաբանական գործողության արդյունք՝ (18 556 = լրացուցիչ հատկացված ֆինանսական միջոցներ՝ 8 764 593 400 ՀՀ դրամ ÷ տվյալ տարվա բյուջեով սահմանված միջին կենսաթոշակի չափ՝ 39 361 ՀՀ դրամ ÷ 12 ամիս:

Միաժամանակ,2016թ. բյուջեով սահմանված միջին կենսաթոշակի չափը կազմել է 40 808 ՀՀ դրամ, իսկ 2017թ. համար՝ 40 512 ՀՀ դրամ:

2. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Օտարերկրյա քաղաքացիներին և երկքաղաքացիներին կատարված վճարումները գնահատելով ռիսկային, բնակչության պետական ռեգիստրի (այսուհետ՝ ԲՊՌ) տվյալների շտեմարանում առանձնացվել են կենսաթոշակային տարիք ունեցող օտարերկրյա 1,690 քաղաքացիների տվյալներ, որոնցից մինչև 2018թ-ը հաշվառումից տարբեր պատճառներով դուրս էին եկել 490-ը: Վերջիններիս տվյալները կենսաթոշակների վճարումների էլեկտրոնային տվյալների բազայի հետ համադրելու արդյունքում պարզվեց, որ բանկային փոխանցման միջոցով վճարվել է 3 անձի 1.018,560 դրամ, իսկ Հայփոստի միջոցով 1 անձի՝ 416,900 դրամ:

Առաջարկ

Օտարերկրյա քաղաքացիների և երկքաղաքացիների կենսաթոշակի իրավունքի իրացման և վճարումների հարցերի կանոնակարգման նպատակով պետք է հստակ սահմանել կենսաթոշակը այլ երկրում ստանալու փաստերի ճշտման նպատակով հարցումների անցկացման մեխանիզմ, որը հնարավորություն կտա առցանց ռեժիմում տվյալներ ստանալ երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում, օտարերկրյա քաղաքացուն այլպետությունումկենսաթոշակնշանակելուկամ ՀՀ քաղաքացուն և ՀՀ երկքաղաքացուն ՀՀ հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում, ՀՀ հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց դեպքում:

Ղեկավարության արձագանք

Արձագանքը բացակայում է:

3. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Իրականացվել են կենսաթոշակառուների ցանկերի տվյալների նույնականացումներ և համադրումներ ԲՊՌ տվյալների հետ: Համադրված տվյալների մեջ թվով 126 քաղաքացիների հաշվառման վերաբերյալ տվյալները բացակայում են ԲՊՌ-ում, սակայն ոմանց 2018թ-ին բանկային փոխանցումներով վճարվել է 8,131,435 դրամ, իսկ Հայփոստի միջոցով՝ 18,175,093 դրամ:

ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված ԲՊՌ տվյալների հիման վրա նախապատրաստվում է տվյալների բազա, որը հիմք է հանդիսանում համակարգում առկա շահառուների նույնականացումների և տեղաշարժերի համար, ինչը ավելացնում էտվյալների բազաների փոխգործակցման ընթացքում սուբյեկտիվ բացթողումների և սխալների հավանականության չափաբաժինը: Սա լրացուցիչ ռիսկեր է պարունակում համակարգի շահագործման և տվյալների նույնականացման հարցում: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ Պետական կենսաթոշակային տեղեկատվական համակարգի շահառուների տվյալների և ԲՊՌ տվյալների բազայի համադրումների արդյունքում թվով 65 հանրային ծառայությունների համարանիշերի (ՀԾՀ) տվյալները ԲՊՌ-ում չեն գտնվել, ինչը հավաստվել է ԲՊՌ վարող լիազոր մարմնի ներկայացուցչի կողմից:

Առաջարկ

Տվյալների միջգերատեսչական փոխանակումը անհրաժեշտ է իրականացնել առավել համակարգված և տվյալների բազմակողմանի վերլուծության համար համապատասխան ծրագրային միջոցներ կիրառելու և այդ միջոցները թափանցիկ կառավարելու միջոցով: Անհրաժեշտ է նաև, որ այդ ծրագրային միջոցները լինեն ինքնաշխատ, նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը տվյալների համադրման և սահմանափակումների կիրարկման ընթացքում:

Ղեկավարության արձագանք

Ծառայության կողմից յուրաքանչյուր ամիս իրականացվում է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող և հերթական ամսում ցուցակավորման ենթակա կենսաթոշակի գործերում առկա կենսաթոշակառուների տվյալների (ներառյալ ՀՀ ուժային կառույցի կենսաթոշակառուների) և այդ պահին ԲՊՌ կողմից Ծառայությանը շաբաթական պարբերականությամբ տրամադրվող տվյալների շտեմարանի տեղեկատվության համադրում: Համադրման ընթացքում վեր են հանվում խնդրահարույց գործերը՝

- արխիվացված անձը հաստատող փաստաթղթեր,
- վավերականության ժամկետը լրացած կամ առանց ՀՀ բնակության վայրի հասցեում հաշվառման օտարերկրյա անձը հաստատող փաստաթղթեր, կացության քարտեր, ՀՀ հատուկ անձնագրեր, կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթեր, քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականներ,
- հաշվառումը դադարեցված ծննդյան վկայականներ,

- կենսաթոշակառուի անվան, ազգանվան, հայրանվան, ծննդյան օր, ամիս, տարի և սեռի անհամապատասխանություններ ԲՊՌ տվյալների հետ,
- այլ խնդրահարույց գործեր, որոնք ենթակա են լրացուցիչ ուսումնասիրության:

Համադրումից հետո նշված բոլոր խնդրահարույց գործերով կատարվում է լրացուցիչ ուսումնասիրություն՝ վճարման հետագա ընթացքը որոշելու նպատակով:

Համադրումների ընթացքում անձի նույնականացումն իրականացվում է հանրային ծառայության համարանիշով, հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարով, անձնագրով, կացության քարտով, ՀՀ հատուկ անձնագրով, կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով, ծննդյան վկայականով, քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականով, նոր անձը հաստատող փաստաթղթի հիմք հանդիսացող փաստաթղթի համարով: Այսինքն՝ հանրային ծառայության համարանիշը ԲՊՌ տվյալների շտեմարանում չգտնվելը հիմք է հանդիսանում հանրային ծառայության համարանիշի անհամապատասխանությունը ուսումնասիրելու, փոփոխությունը ՀՀ Ոստիկիանության անձնագրերի և վիզաների վարչության հետ համագործակցության շրջանակներում պարզելու, կենսաթոշակառուից համապատասխան փաստաթղթերը պահանջելու և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում համապատասխան ուղղումը կատարելու համար:

Ամփոփելով վերոնշյալը՝ հայտնում եմ, որ Արձանագրությամբ ներկայացված ցանկերում առկա շահառուների մի մասը 2018 թվականի ընթացքում վճարման ցուցակներում չի ներառվել՝ կենսաթաշակ վճարելը կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադրեցված լինելու պատճառով: Իսկ Հաշվեքննիչ պալատի կողմից կենսաթոշակառուների տվյալների նույնականացումը և ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառում ունենալու ստուգումը իրականացվել է միայն հանրային ծառայության համարանիշով համադրման միջոցով, որը չէր կարող ապահովել լիարժեք արդյունք:

Հաշվեքննիչ պալատի կողմից տրամադրված ցանկերից խնդրահարույց են եղել ընդհանուր առմամբ երկու գործեր, որոնց նկատմամբ 2018 թվականի ընթացքում իրականացվել են համապատասխան միջոցառումներ:

4. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՀՀ երկքաղաքացին ունի՝ համաձայնագրի մասնակից պետությունում իրեն կենսաթոշակ նշանակված չլինելու (լինելու) մասին հայտարարություն, իսկ համաձայնագրի մասնակից պետության քաղաքացի հանդիսացող ՀՀ երկքաղաքացին՝ նաև այդ պետությունում իրեն կենսաթոշակ նշանակած չլինելու կամ կենսաթոշակ նշանակված լինելու մասին փաստաթուղթ ներկայացնելու օրենսդրական պարտավորություն, իսկ օտարերկյա

քաղաքացին՝ այլ պետությունում իրեն կենսաթոշակ նշանակված չլինելու կամ կենսաթոշակ նշանակված լինելու մասին փաստաթուղթ:

Այն դեպքերում, երբ Համաձայնագրի մասնակից պետության քաղաքացիություն ունեցող՝ ՀՀ երկքաղաքացին, համաձայնագրի մասնակից պետությունում բնակության իրավունք ունեցող ՀՀ քաղաքացին, համաձայնագրի մասնակից պետության քաղաքացիություն ունեցող անձը չի ներկայացնում սահմանված փաստաթղթերը, ապա՝ նրա կենսաթոշակի իրավունքը որոշվում է Ծառայության կողմից համապատասխան մարմին ուղարկված հարցման պատասխանի համաձայն: Ծառայության կողմից վերը նշված քաղաքացիների կենսաթոշակի իրավունքի ճշտման գործառույթը դեռևս կանոնակարգված չէ, հարցումներն իրականացվել են Ծառայության առանձին տարածքային բաժինների կողմից, ինչը չի ամփոփվել և արտացոլվել տեղեկատվական համակարգում:

Մյուս կողմից էլ առկա իրավակարգավորումների համաձայն, անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթեներկայացվել է համաձայնագրի մասնակից պետություն կենսաթոշակի գործն ուղարկելու մասին այդ պետության իրավասու մարմնի պահանջագիրը կամ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ երկքաղաքացու գրավոր դիմումը կամ հայտարարությունը՝ համաձայնագրի մասնակից պետությունում իրեն կենսաթոշակ նշանակած լինելու մասին կամ դրա մասին տեղեկատվություն է ստացվել տվյալ պետության իրավասու մարմնից: ԱՊՀ երկրներից 2018թ-ին կատարված հարցումների և վճարման էլեկտրոնային համակարգերի տվյալների համադրումները ցույց են տվել, որ.

- ներկայացված էլեկտրոնային ցուցակների 81.5% դեպքերում բացակայում են կենսաթոշակառուների գործերի համարները (25188-ից 20534 հարցումներում կենսաթոշակային գործերի համարները բացակայում են), ինչը սահմանափակում է հարցումների արդյունքներով կենսաթոշակների վճարման կամ իրավունքի դադարեցման պահանջների օրինաչափության գնահատում իրականացնելը,
- հարցման մեջ նշված կենսաթոշակառուների անուն, ազգանուն, հայրանուն և ծննդյան տարեթիվ տվյալներով իրականացված համադրումները հիմնականում տալիս են սխալ տեղեկատվություն, հետևաբար այդ տվյալների հիման վրա համադրման արդյունքներին գնահատական չի տրվել:

Առկա կենսաթոշակային գործերի (4584) համարների հիման վրա համադրումները ցույց են տվել, որ չնայած հարցումների արդյունքներով գործերը ուղարկվել են, կամ հարցումներով տեղեկատվություն է պահանջվում աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի և այլ տվյալների մասին, սակայն հարցումներին հաջորդող ամիսներին վերջիններս շարունակում են վճարվել: 2018թ-ի ընթացքում հարցումների արդյունքում կենսաթոշակային գործերի համարներ ունեցող տողերի և կենսաթոշակի վճարման էլեկտրոնային ցանկերի համադրումների արդյունքում համընկած դեպքերով

բանկային փոխանցումների միջոցով վճարված գումարի չափը կազմում է 14.271.519 ՀՀ դրամ, իսկ Հայփոստի միջոցով վճարումները՝ 20.807.147 ՀՀ դրամ: ԱՊՀ հարցումների հետ կապված հնարավոր կրկնակի վճարումների ռիսկի բարձր գնահատման համար հիմք է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ այդ հարցումների շրջանակներում առկա կենսաթոշակային գործերի և ՍԷԿՏ համակարգի տվյալների համադրումները ցույց են տալիս, որ դրանց հասցեատերերի մեջ կան 12 ամիս և ավել բացակայողներ, որոնց 2018թ-ի ընթացքում բանկային փոխանցումների միջոցով վճարվել է 12,769,027 ՀՀ դրամ, իսկ Հայփոստի միջոցով՝ 38,530,463 ՀՀ դրամ: Այս փաստը ևս մեկ անգամ հիմնավորում է այն ենթադրությունը, որ հարցման սուբյեկտները արդեն իսկ հարցման ժամանակահատվածում և դրանից ամիսներ առաջ փաստացի բացակայել են ՀՀ-ից, սակայն նրանց կենսաթոշակի չվճարման ուղղությամբ պատշաճ միջոցառումներ չեն ձեռնարկվել:

Առաջարկ

1. Ձեռնարկել միջոցառումներ ռիսկային գոտում գտնվող քաղաքացիներին բացահայտելու ուղղությամբ, ծանուցել վերջիններիս, պարզել Համաձայնագրի մասնակից որևէպետությունում կենսաթոշակ ստանալու հանգամանքը և վերացնել հետևանքները (դադարեցնել կենսաթոշակ ստանալու իրավունքը, բռնագանձել ավել վճարված գումարները):
2. Ձեռնարկել Համաձայնագրում փոփոխություններ կատարելու միջոցառումներ կամ նախաձեռնել ՌԴ-ի հետ երկկողմանի համաձայնագրի կնքման գործընթաց,
3. Քննարկել հարցումներն առցանց եղանակով իրականացնելու մեխանիզմների ներդրման հնարավորությունը, ինչը ըստ էության կնվազեցնի կամ կբացառի առկա ռիսկերը,
4. Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ կենսաթոշակային օրենսդրության մեջ նախատեսելով դրույթ՝ Համաձայնագրերի մասնակից պետությունների հետ փաստաթղթաշրջանառության ընթացքում անձի ՀՀ-ում կենսաթոշակի վճարումը կասեցնելու ուղղությամբ:

Ղեկավարության արձագանք

Իրականացվում են լրացուցիչ միջոցառումներ միաժամանակ ՀՀ-ում և ՀՀ-ի հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական պայմանագիր (Համաձայնագիր) (այսուհետ՝ Համաձայնագրի մասնակից պետություն) կնքած պետություններում կրկնակի կենսաթոշակ նշանակելու դեպքերը բացահայտելու ուղղությամբ:

Առանձնացվել են այն շահառուները, որոնց ՀՀ-ում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված չէ, և որոնց վերաբերյալ Համաձայնագրի մասնակից պետությանիրավասու մարմիններից երբևէ ստացվել են քաղաքացիների կենսաթոշակի իրավունքի իրացման վերաբերյալ տարբեր հարցումներ: Ուսումնասիրություններն ավարտելուց հետո, արդյունքների հիման վրա, համապատասխան հարցումներ կուղարկվեն Համաձայնագրի մասնակից պետություն, և ստացված պատասխանների հիման վրա անդրադարձ կկատարվի ՀՀ-ում նրանց կենսաթոշակ ստանալու իրավունքի, առկայության դեպքում՝ ավել վճարված գումարների վերականգնման հարցերին:Արդյունքների մասին Հաշվեքննիչ պալատը լրացուցիչ կտեղեկացվի:

5. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում որպես ռիսկային է գնահատվել աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակի վերահաշվարկման գործընթացը: Այդ նպատակով, 2018թ-ին աշխատող կենսաթոշակառուների ցանկը, որոնց կենսաթոշակը վերահաշվարկվել է 2018թ-ի ընթացքում, համադրվել է ՍԷԿՏ համակարգում առկա տվյալների հետ, որի արդյունքում 48,829 կենսաթոշակային գործից 479-ը ՀՀ-ից բացակայել են 3-12 ամիս ժամանակահատվածով, այդ թվում՝ 244-ը բացակայել են 12 ամսից ավել, իսկ մնացած 235-ը՝ 3, 6 և 9 ամսից ավել ժամանակահատվածով:

Առաջարկ

Ռիսկերի նվազեցման նպատակով աշխատող կենսաթոշակառուների մասով պարբերաբար իրականացնել նմանատիպ համադրումներ և ստացված տեղեկատվությունը փոխանցել պետական եկամուտների կոմիտեին՝ օրենքով սահմանված կարգով ընթացք ապահովելու համար:

Ղեկավարության արձագանք

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումների համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝ տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու դիմում՝ դիմումը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:
Տվյալ դեպքում կենսաթոշակի չափը վերահաշվարկելու համար բացի դիմումից այլ փաստաթուղթ չի ներկայացվում և կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է պետական

կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա՝ անձի աշխատանքային գործունեության մասին հարկային մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա:
Ըստ այդմ, Հաշվեքննիչ Պալատի կողմից ներկայացված ցանկի՝ նշված կենսաթշակառուների կենսաթոշակը վերահաշվարկվել է իրենց դիմումների և հարկային մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա:
Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման Հավելված 1-ի 20-րդ կետի 20.9 ենթակետով 2020թ-ին նախատեսված է աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակ վերահաշվարկելու գործառույթը իրականացնել առցանց ներկայացված դիմումի հիման վրա:
Հիաշվի առնելով այն փաստը, որ նշված ցանկում առկա բոլոր գործերը ներառված են նաև 22-րդ կետում նշված ՀՀ-ից բացակայելու վերաբերյալ համապատասխան ցանկերում, ուստի Ծառայության կողմից իրականացված և 22-րդ կետով նկարագրված բոլոր գործառույթները կատարվել են նաև այս ցանկում առկա շահառուների նկատմամբ:

6. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 18-ի N882-Ն որոշմամբ աշախատանքային գրքույկներում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու համար լիազորված պետական կառավարման մարմին է ճանաչվել Ծառայությունը: Սխալներ և խնդիրներ պարունակող թվով 1242 տեսաներմուծված աշխատանքային գրքույկների անվանացանկում տեղ են գտել հետևյալ բնույթի անճշտություններ՝ ամբողջ գրքույկը կցված չէ, էջերը կրկնակի են տեսաներածված, աշխատանքային գրքույկին կցված է այլ անձի աշխատանքային գրքույկը, գրքույկի որոշ էջեր բացակայում են, էջերը կրկնակի են տեսաներմուծված, կցված է սխալ սերիա և համարով գրքույկ, խախտված է էջերի հերթականությունը, էջերը անընթեռնելի են: Ընդհանուր առմամբ սխալ տեսաներածված ընդամենը 4 դեպքերով և թվով 487 գրքույկներ շտկվել են վճարումից հետո: Մինչդեռ պայմանագրի կետ 5-ի համաձայն՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից (ՎԵԲ ֆաունդեյշն՝ ՍՊ ընկերություն),գանձվում է տուգանք պայմանագրի գնի 0.5 %-ի չափով: Հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ Ծառայության կողմից 2018թ. ընթացքում Կատարողի նկատմամբ չեն ձեռնարկվել պայամանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները, մինչդեռ յուրաքնչյուր դեպքի տույժի չափը կազմում է 176.400 ՀՀ ՀՀ դրամ, իսկ բոլոր 4 դեպքերով՝ 705.600 ՀՀ դրամ:

Առաջարկ

Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ պայմանագրով սահմանված տույժերի հաշվարկումը և գանձումը ապահովելու համար:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

7. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՍԷԿՏ համակարգից ստացվող տեղեկատվության և կենսաթոշակների վճարման էլեկտրոնային ցանկերի համարդումների արդյունքներով գնահատված ռիսկերը դեռևս մնում են բարձր: Չնայած 2017թ-ին արձանագրված հնարավոր խեղաթյուրումներին, Ծառայության կողմից այդ ռիսկերի մեղմման կամ չեզոքացման նպատակով կատարված քայլերը արդյունավետ չեն:

Ծառայության կողմից 2019թ-ի օգոստոս ամսվա ստացված տվյալները ներկայացվել են դատախազություն՝ ստուգման համար, ինչպես նաև հուլիս ամսին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) գրություն է ուղարկել Ազգային Անվտանգության Ծառայության (ԱԱԾ) տնօրենին, Ծառայության պետի մայիսի 15-ի կարգադրությամբ իրականացվել են առկա տեղեկատվության ճշտումներ, սակայն 2018թ-ի տվյալների համադրումների արդյունքները ցույց են տալիս, որ նշված ուղղությամբ ռիսկը դեռևս բավականին բարձր է: Ընդհանուր առմամբ, ՍԷԿՏ համակարգի տվյալների հետ համադրման արդյունքում արձանագրված ռիսկերի հետևանքով 2018 թվականի բոլոր ամիսների հարցումների արդյունքում «12 ամիս բացակայում է» կարգավիճակով անձանց բանկերի միջոցով վճարվել է 3.003.416.855 ՀՀ դրամ, իսկ Հայփոստի միջոցով վճարումները կազմել են 1.781.197.011 ՀՀ դրամ, որից լիազորված անձանց միջոցով վճարումները կազմել են 765.155.639 դրամ:

3, 6 և 9 ամիս բացակայած շահառուներից 2018թվականի ընթացքում բանկային վճարումներով ստացել են 10.769.322.431 ՀՀ դրամ, իսկ Հայփոստի միջոցով վճարումները 3, 6 և 9 ամիսներ բացակայողների համար կազմել է 3.945.015.023 ՀՀ դրամ, որից 1.597.481.700 դրամը վճարվել է լիազորված անձանց միջոցով:

Հայփոստի միջոցով լիազորված անձանց վճարումները գնահատվում են ռիսկային, քանզի ՍԷԿՏ համակարգի կողմից ստուգման արդյունքում տրամադրված տվյալները պարունակում են տվյալներ միայն 3,6,9 կամ 12 ամիս բացակայելու մասին՝ առանց կոնկրետ ամսաթվերի, ինչը հնարավորություն չի ընձեռում գնահատել լիազորագրի տրամադրման ժամկետների հավաստիությունը:

Արձանագրված ռիսկերի շրջանակներում համադրվել են նաև լիազորված անձանց միջոցով 2018 թվականի բոլոր ամիսների հարցումների արդյունքում ''12 ամիս բացակայում է'' կարգավիճակով Հայփոստի միջոցով վճարումները, որոնք կազմել են 4.754.972 ՀՀ դրամ:

3, 6 և 9 ամիս բացակայած շահառուներից 2018 թվականի ընթացքում Հայփոստի վճարումներով ստացել են 22.556.940 ՀՀ դրամ:

Հայաստանից բացակայողներին կրկնակի վճարումներ կատարելու ռիսկը գնահատելու նպատակով իրականացվել է հաշվեքննվող օբյեկտի ռիսկային հոդվածի ընտրություն՝ ՍԷԿՏ համակարգի կողմից որպես հանրապետությունից 3-12 ամիս բացակայող: Ընտրված կենսաթոշակառուների և նրանց կողմից լիազորված անձանց տվյալների ուսումնասիրման նպատակով ձևավորված Ծառայության աշխատանքային խմբի կողմից իրականացված վերակատարման արդյունքում պարզվեց, որ ընտրված 20 գործերով ծանուցվել են 17 շահառուներ, որոնցից ծանուցումն ստացել են 5 քաղաքացիներ, իսկ տարածքային բաժիններ ներկայացել են միայն 4-ը: Նշվածը ևս մեկ հավելյալ գործոն է, որը հաստատում է ՍԷԿՏ համակարգի տվյալների բազայի հետ համադրումների արդյունքում երկրից 3-12 ամիս ժամկետով բացակայողների կենսաթոշակների վճարման բարձր ռիսկայնությունը:

Առաջարկ

Անհրաժեշտ է Ծառայության կողմից հնարավորին սեղմ ժամկետում իրականացնել բանկերի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2018թ-ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց բանկ ներկայանալու ամսաթվերի և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում, Հայփոստի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2018թ-ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց վճարումների ստացման ժամկետների և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում: Բացի այդ, անհրաժեշտ է կենսաթոշակների վճարման պայմանագիր կնքած բանկերի հետ համատեղ մշակել և ներդնել կենսաթոշակառուների նույնականացման միջոցներ, այդ թվում անձանց մատնահետքերով նույնականացումը: Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ կենսաթոշակային օրենսդրության մեջ նախատեսելով դրույթ՝ ՍԷԿՏ համակարգի տվյալների համաձայն անձի ՀՀ-ից բացակայելու դեպքում կենսաթոշակի վճարումը կասեցնելու նպատակով:

Ղեկավարության արձագանք

ՍԷԿՏ համակարգի տվյալների կենսաթոշակառուների վճարումների պահին ՀՀ-ից բացակայող անձանց վճարումների հետ կապված ռիսկերի բացառման նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները:

Կանխիկ եղանակով վճարումների դեպքում՝յուրաքանչյուր ամիս ստանալուվ վերը նշված տեղեկատվությունը, ցանկը համապատասխան հանձնարարականով տրամադրվում է տարածքային բաժիններին, ցանկում ընդգրկված շահառուների մասով կենսաթոշակի վճարման ցուցակներում «ՉՎ» նշագրում կատարելու, նրանց տարածքային բաժին հրավիրելու և ՀՀ-ից բացակայության ժամկետները ճշտելու նպատակով:

Տարածքային ստորաբաժանում ներկայացած շահառուների մասով՝ կենսաթոշակի հետագա վճարումները իրականացվում են Ծառայության թույլտվությամբ (ովքեր բացակայել են ՀՀ-ից): ՀՀ-ից չբացակայած շահառուների մասով փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում՝ կենսաթոշակի վճարումները շարունակվում են տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված տեղեկանքով, որի մասին տեղեկացնում են նաև Ծառայությանը: ՀՀ-ից բացակայողների ցանկը տրամադրվում է նաև «Հայփոստ’ ՓԲ ընկերությանը՝ իրենց կողմից ոչ իրավաչափ վճարված գումարները Ծառայության գանձապետական հաշվին վերադարձնելու նպատակով:

Տարածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում ոչ իրավաչափ, վերադարձման ենթակա գումարներ հայտնաբերելու դեպքում՝ Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվում առերևույթ հանցագործության մասին հաղորդում: 2018թվականի ընթացքում ներկայացվել է թվով 4 հաղորդում:

Կանխիկ վճարումներ 3,6,9 ամիս բացակայած, 12 ամիս բացակայած շահառուների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատից ստացված աղյուսակների ուսումանիրությունը ցույց տվեց, որ նշված ցանկերում առկա վճարումներով շահառուները գտնվել են ՀՀ-ից դուրս, սակայն որոշ գործերով ցուցակներում ներառված են լիազորված անձինք (ցանկը կցվում է, առանձին պանակ), որոնց լիազորագրերը օրենքին համապատասխան ներկայացվել են տարածքային բաժին, հաշվառվել և կցվել են «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի համապատասխան էլեկտրոնային գործին:

Միաժամանակ, շարունակվում են համապատասխան միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են ՍԷԿՏ համակարգի տվյալների և պետական կենսաթոշակային համակարգին տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համադրության արդյունքների հիման վրա բացակայացած անձանց հնարավոր ոչ իրավաչափ վճարումների դեպքերը բացահայտելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ Ծառայություն ուղղված Հաշվեքննիչ պալատի 2019թ. նոյեմբերի 18-ի թիվ ՀՊԵ-ԱՆ-174 գրության հիման վրա, իրականացվել են համատեղ ընտրանքային ուսումնասիրություններ: Ծառայության կողմից 2019 թվականի նոյեմբերի 20-ին պատշաճ եղանակով (պատվիրված նամակով) ծանուցվել են՝ նախատեսված ժամանակացույցով

անհրաժեշտփաստաթղթերն իրենց սպասարկող տարածքային բաժիններ ներկայացնելու մասին (ծանուցվել են թվով 17 անձ, 3-ի դեպքում կենսաթոշակը ստանալու համար լիազորված անձինք կրկնվել են): Տարածքային բաժիններ են ներկայացել ընդամենը 4 քաղաքացի, որոնց կողմից ներկայացված փաստաթղթերով փաստվել է նրանց խնդրո առարկա ժամանակահատվածներում ՀՀ-ում գտնվելու փաստը և ոչ իրավաչափ վճարման բացակայությունը:

2019թ. օգոստոս ամսվա կանխիկ եղանակով կատարված վճարումների գործընթացն ավարտելուց հետո, հնարավոր ոչ իրավաչափ վճարումների փաստերով առանձնացվել է 379 շահառու, ովքեր ըստ ՍԷԿՏ համակարգի տվյալների 2019թ.օգոստոս ամսվա դրությամբ բացակայել են ՀՀ-ից 3, 6, 9 և 12 ամիս:

Նշված փաստերի առթիվ 2019 թվականի օգոստոսի 30-ին N 03/17/19590-2019 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացրել հանցագործության վերաբերյալ հաղորդում:

Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված հանցագործությունների մասին հաղորդումները մերժվում են՝ (արդեն առկա են շուրջ 145 քրեական գործով կարճման և մերժման որոշումներ) «Քրեական գործերի վարույթները կարճելու կամ քրեական գործերի հարուցումները մերժելու մասին» որոշումներով:

Նման Որոշումների կայացման հիմքում հիմնականում դրվում է այն փաստը, որ շահառուները խնդրո առարկա ժամանակահատվածներում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում:

Առկա իրավիճակի մասին նաև տեղեկացվել է Ազգային անվտանգության ծառայությունը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից առաքված՝ 26.11.2019թ. թիվ ԶԲ/ՍԱԾ/25320-2019 գրությամբ:

Անկանխիկ եղանակով վճարումների դեպքում՝յուրաքանչյուր ամիս ստանալով վերը նշված տեղեկատվությունը, ցանկը տրամադրվում է տարածքային ստորաբաժանումներին՝ ցանկում ընդգրկված շահառուներին տարածքային բաժին հրավիրելու և ՀՀ-ից բացակայության ժամկետները ճշտելու նպատակով: Միաժամանակ գրություններ են տրամադրվում վճարումներն իրականացրած բանկերին՝ ոչ իրավաչափ գումարները Ծառայության գանձապետական հաշվին վերադարձնելու վերաբերյալ:

Տարածքային ստորաբաժանումներից, համապատասխան բանկերից ստացված և ՍԷԿՏ համակարգի լրացուցիչ ճշտված տեղեկատվությունների ուսումնասիրության արդյունքում ոչ իրավաչափ՝ վերադարձման ենթակա գումարներ հայտնաբերելու դեպքում՝ Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվում առերևույթ

հանցագործության մասին հաղորդում: 2018թվականի ընթացքում ներկայացվել է թվով 2 հաղորդում:

3, 6, 9 ամիս բացակայած շահառուների անկանխիկ վճարումներ:

Այս ուղղությամբ նախորդիվ իրականացված աշխատանքների և ՍԷԿՏ համակարգի տեղեկատվության համադրումների արդյունքում պարզ է դարձել, որ անկանխիկ եղանակով վճարվող շահառուների վճարումների համադրումը Հանրապետությունից 3,6,9 ամիս բացակայած անձանց տեղեկատվության հետ անարդյունավետ է:

Ինչպես հայտնի է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների համաձայն՝ կենսաթոշակառուն պետք է տարեկան 1 անգամ ներկայանա բանկ՝ ՀՀ-ում գտնվելու փաստն արձանագրելու համար, ուստի նշված ցանկերի համադրմամբ ոչ իրավաչափ վճարումներ երբևէ չեն արձանագրվել: Սակայն Ծառայության կողմից, հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի 2017թ-ի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը, ևս մեկ անգամ կատարվել է ՍԷԿՏ համակարգով ստացված 3, 6, 9 ամիս բացակայած անձանց տեղեկատվության համադրումը անկանխիկ եղանակով վճարվող թոշակառուների (նպաստառուների) բանկ ներկայանալու ամսաթվերի հետ: Արդյունքում՝ արձանագրվել է ընդամենը 17 գործ, որոնց ստուգման արդյունքում վերականգնման ենթակա գումարներ չեն արձանագրվել:

8. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Փաստացի, վճարված կենսաթոշակի մասով «Հայփոստ» ՓԲԸ-ին 2018 թվականին մատուցած ծառայությունների դիմաց հաշվարկվել և վճարվել է 1,330,798.5 հազ. ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և բանկերի միջև կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրերի, բանկերին մատուցված ծառայությունների դիմաց վճարվել է 86,545.0 հազ. ՀՀ դրամ: Նշենք, որ բանկերի հետ կնքած պայմանագրերով 1 կենսաթոշակառուի հաշվարկով որպես ծառայության վճար պետ. բյուջեի միջոցների հաշվին Ծառայության կողմից հաշվարկվում և վճարվում է տարեկան 360 ՀՀ դրամ, որը հաստատվել է «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» 2011թվականի մայիսի 5-ի թիվ 670-Ն որոշմամբ «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» օրինակելի ձևի 3-րդ կետով, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով՝ 4,468 ՀՀ դրամ: Ուշագրավ է, որ փաստացի «Հայփոստ» ՓԲ ընկերությանը 1 կենսաթոշակառուի համար մատուցված ծառայությունների դիմաց պետ. բյուջեի միջոցների հաշվին կատարված վճարումները 12.4 անգամ գերազանցել են բանկերի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին:

Առաջարկ

Ուսումնասիրել շահառուներին բանկերի միջոցով վճարումների հնարավորությունը՝ ըստ տարածաշրջաններում բանկային ծառայությունների բաշխվածության:

Ղեկավարության արձագանք

Նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի համաձայն նախատեսվում է աստիճանական անցում կատարել կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգի:

9. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Ծառայության ամփոփ վերլուծությունների և մոնիտորինգի վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Ծառայության պետի 2017թ-ի նոյեմբերի 1-ի N U85 հրամանով հաստատվել է որպես պատասխանատու՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման վարչությունից ստացված տվյալները վերլուծելու, ամփոփելու և ռիսկերը չեզոքացնելու միջոցառումներ ձեռնարկելու համար: Հաշվեքննությունից պարզվեց, որ բացակայում է Ծառայության կողմից հաստատված պլան-ժամանակացույց՝ Վարչության կողմից 2018թ-ի ընթացքում մոնիթորինգի իրականացման համար: Մոնիթորինգն իրականացվել է հայեցողական եղանակով, Ծառայության ղեկավարության առանձին հրամանների հիման վրա: Ըստ Ծառայության կանոնադրության 11-րդ կետի Վարչության հիմնական խնդիրներն են՝ մոնիթորինգի իրականացումը նաև վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Վարչության կանոնադրության 4-րդ գլխի 7-րդ կետով սահմանված է, որ Վարչությունը ուսումնասիրում, վերլուծում է կենսաթոշակների և նպաստների վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ կազմված փոխադարձ ակտերում առկա տեղեկատվությունը և դրա նկատմամբ իրականացնում է մոնիթորինգ: Սակայն հաշվեքննությամբ պարզվեց, որ Վարչության կողմից ստուգումներ չեն կատարվել վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում (‘Հայփոստ’ և բանկեր), չի իրականացվել նաև փոխադարձ ակտերի տեղեկատվության վերլուծություն և մոնիթորինգ:

Առաջարկ

Վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների ամբողջական վերլուծություն և գնահատում կատարելու նպատակով մոնիտորինգի վարչության աշխատանքային ծրագրում ներառել ստուգումների

իրականացման պլան-ժամանակացույց՝ հիմնված ռիսկերի գնահատման հստակ մեթոդաբանության վրա:

Ղեկավարության արձագանք

Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի, նրա համապատասխան ենթահամակարգերի, այլ տեղեկատվական համակարգերի շտեմարանների տվյալները, կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի համապատասխան տեղեկատվությունը, այդ թվում՝ ավարտական փաստաթղթերը (փոխադարձ ակտեր և այլն), հնարավորություն են տալիս համադրումներ և վերլուծություններ իրականացնել՝ առանց կենսաթոշակների և նպաստների վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններ այցելելու:Սակայն,նկատի առնելով Հաշվեքննիչ պալատի դիրքորոշումը խնդրո առարկայի վերաբերյալ՝ 2020 թվականի ընթացքում նախատեսվում է կենսաթոշակների և նպաստների կանխիկ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում իրականցնել համապատասխան ստուգումներ:

2018 թվականի ընթացքում աշխատանքային ստաժի՝ աշխատանքի ընդունման և ազատման հիմքերի, այդ թվում՝ վճարված աշխատավարձերի հավաստիության ստուգումումների արդյունքներում թվով 8 գործով հանցագործության վերաբերյալ հաղորդումներ չի ներկայացվել, քանի որ վերը նշված գործերով ստաժի նվազեցումները չեն կրել հանցակազմի հատկանիշներ: Շահառուները իրականում աշխատել են աշխատանքային գրքույկում կատարված գրառմանը համապատասխան ընկերություններում, սակայն նրանք գտնվել են հարկադիր պարապուրդում կամ աշխատավարձ վճարված չի վճարվել կամ ստուգումները իրականցվել են ՀՀ ազգային արխիվում (ստուգվող ընկերությունները սնանկ են, լուծարված են և այլն): Նշված տարիները նվազեցվել են աշխատանքային ստաժից, իսկ ստուգումները իրականացվել են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի, նրա համապատասխան ենթահամակարգերի, այլ տեղեկատվական համակարգերի շտեմարանների տվյալների բազմաշերտ վերլուծության արդյունքում:

2018 թվականի ընթացքում ՍԷԿՏ համակարգի տվյալների կենսաթոշակառուների վճարումների պահին ՀՀ-ից բացակայող անձանց վճարումների հետ կապված ռիսկերի բացառման նպատակով «Հայփոստ’ ՓԲ ընկերությանն է ուղղվել թվով 25 գրություն, որոնք մնացել են անպատասխան, սակայն ոչ իրավաչափ վճարումները բացառելու նպատակով ընկերության ղեկավարության հետ Ծառայությունում պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ, ինչպես նաև ոչ իրավաչափ վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Միաժամանակ հայտնում եմ, որ Ծառայությունը, 2019 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 03/17/28094-2019 գրությամբ կրկին դիմել է «Հայփոստ՝ ՓԲ ընկերությանը՝ վերը նշված թվով 25 գրություններում նշված գործերով ուսումնասիրությունների արդյուքների մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

10. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Ծառայության ստորաբաժանումների կողմից 2018 թվականի ընթացքում անհատույց օգտագործվող 35 տարածքներից միայն 9 տարածքների նկատմամբ է առկա անհատույց օգտագործման իրավունքների սահմանված կարգով պետական գրանցում, 9 տարածքների նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքները գրանցված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի անվամբ, իսկ մնացած 17 տարածքների նկատմամբ իրավունքների պետական գրանցումները բացակայում են, որով խախտվել է

ա/ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ հոդվածը և 135-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման, հետևաբար օգտագործման իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից,

բ/ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 617-րդ հոդվածը, քանի որ Ծառայությունը պարտավոր է վարձակալված գույքն օգտագործել վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցներ Ծառայության կողմից վարձակալության հիմունքներով շահագործվող ոչ բնակելի տարածքների օգտագործումն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու, ինչպես նաև իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ պլանավորելու ուղղությամբ:

Ղեկավարության արձագանք

Նշված տարածքները համապատասխան իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ, ավագանու որոշումներ) անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրված են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Կից ներկայացվում են «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման» վկայականները:

Քաղաք Սպիտակ, Ոփյան փողոց 54 հասցեի բնակելի տան 110.86 քմ. մակերեսով տարածքի նկատմամբ արձանագրված փաստը Ծառայության կողմից ընդունելի է, որի շրջանակներում Ծառայությունը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ դիմելու Վարձատուին՝ տարածքի օգտագործման նշանակությունը փոխելու, հակառակ դեպքում՝ կնքված պայմանագիրը լուծելու և նոր պայմանագիր կնքելու ուղղությամբ:

Քաղաք Վայք, Շահումյան 16 հասցեում գտնվող տարածքը ամրացված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 258-Ն որոշման շրջանակներում: Կից ներկայացվում է «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման» վկայականը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը: Այսինք, եթե կողմերի միջև չի կնքվում համաձայնություն՝ նոտարական կարգով վավերացված վարձակալության պայմանագրի ժամկետը երկարացնելու վերաբերյալ, ապա վարձակալության պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով, իսկ իրավունքները համարվում են գրանցված մինչև այն պահը, քանի դեռ գրանցված իրավունքները չեղարկելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում չի ներկայացվել: Ծառայության Ավանի և Նոր-Նորքի տարածքային ստորաբաժանման գործունեության իրականացման ապահովման համար վարձակալած և նոտարական կարգով վավերացված պայմանագրերի գործողության ժամկետի ավարտից հետո պայմանագրային հարաբերությունները շարունակվել են և չի կնքվել համաձայնություն՝ գործողությունը երկարացնելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ վերը նշված կարգավորումների ուժով, նախորդիվ կնքված պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով՝ իսկ իրավունքները համարվում են գրանցված մինչև այն պահը, քանի դեռ գրանցված իրավունքները չեղարկելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է

վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը: Այսպիսով բացակայում են վարձատու՝ «Իջևանի տպարան» ԲԲ ընկերության առարկությունները՝ պայմանագրի ժամկետի վերաբերյալ, ինչպես նաև առկա չէ իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող որևէ փաստաթուղթ և վարձակալը՝ տվյալ դեպքում Ծառայությունը, շարունակել և շարունակում է օգտվել գույքից, հետևապես պայմանագիրը ճանաչվել է վերսկսված 2016 թվականի հունվարի 18-ից՝ նույն պայմաններով, անորոշ ժամկետով՝ առավել ևս հիմք ընդունելով այն, որ 2016 թվականի հունվարի 15-ին կնքված համաձայնագիրը դիտարկվում է անհիմն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը: Այսպիսով բացակայում են վարձատուի առարկությունները պայմանագրի ժամկետի վերաբերյալ, ինչպես նաև առկա չէ իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող որևէ փաստաթուղթ և վարձակալը՝ տվյալ դեպքում Ծառայությունը, շարունակել և շարունակում է օգտվել գույքից, հետևապես պայմանագիրը ճանաչվել է վերսկսված 2013 թվականի մայիսի 24-ից՝ անորոշ ժամկետով:

11. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Վճարված աշխատանքային կենսաթոշակների գումարների ճշմարտության ու արժանահավատության ստուգման նպատակով, 218,782,086.6 հազ. ՀՀ դրամ բազմությունից, **Աուդիտի Միջազգային Ստանդարտ (այսուհետ՝ ԱՄՍ) 530 «Աուդիտորական ընտրանքը և ընտրանքային այլ ընթացակարգերի»** համաձայն կիրառվել է բազմության ստուգման ընտրանքի մեթոդը: Ընտրված տարրերի

մանրամասների ստուգման արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 3,224,760 ՀՀ դրամ խեղաթյուրում: Համաձայն **ԱՄՍ 530 «Աուդիտորական ընտրանքը և ընտրանքային այլ ընթացակարգերի»** հոդված 13-ի կետ 51-ի՝ ընտրանքի մեջ հայտնաբերված սխալը տարածվել է ամբողջ բազմության վրա, որի արդյունքում ընդհանուր խեղաթյուրման գումարը գնահատվել է 5,843,739 հազ. ՀՀ դրամ:

Առաջարկ

Կենսաթոշակային գործերում կենսաթոշակի չափի հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ամբողջականության ապահովման նպատակով՝ կազմել ժամանակացույց ըստ Ծառայության տարածքային ստորաբաժանումների կենսաթոշակային գործերի ընտրանքային ուսումնասիրություններ իրականացնելու համար: Հաշվեքննությամբ արձանագրված դեպքերի մասով՝ օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել արդյունքների և ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվություն:

Ղեկավարության արձագանք

Լրացուցիչ ուսումնասիրության են ենթարկվել Հաշվեքննիչ պալատի կողմից առանձնացված 28 կենսաթոշակի գործերը, որոնց վերաբերյալ արձանագրվել են էական խեղաթյուրումներ: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա պարզվել է, որ 28 գործերից 9-ում բացակայում են սխալ հաշվարկներ, այլ շահառուների էլեկտրոնային գործերում ամբողջացված չեն եղել աշխատանքային ստաժը հիմնավորող՝ բացակայող փաստաթղթերը՝ կազմակերպությունների վերակազմակերպման (իրավահաջորդության), սոցիալական վճարներ կատարելը հավաստող փաստաթղթեր: Այս պահին նշված 9-ը գործով բոլոր փաստաթղթերը կցված են շահառուների նշված կենսաթոշակների էլեկտրոնային գործերին:

28 գործից մյուս 9 գործով կատարվել են համապատասխան հարցումներ գործատուներին և Ազգային արխիվ՝ գործերում առկա ստաժի իրավաչափությունը հաստատելու կամ բացառելու համար:

Մնացած 10 գործերով ուսումնասիրությունները շարունակվում են (նշանակումներն ունեն 20 և ավելի տարվա վաղեմություն):

Լրացուցիչ, մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը Ձեզ կներկայացվեն 19 գործով իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Այսպիսով, առաջարկում եմ այս պահին խեղաթյուրումների թվից՝ 28 գործ և գումարից՝ 3 224 760 դրամ, հանել ճշգրտված գործերի տարբերությունը՝ 9 գործ և համապատասխան գումարը՝ 1 590 480 դրամ, իսկ խեղաթյուրումների թվի և գումարի վերջնական

գնահատականին անդրադարձ կատարել ամբողջական ուսումնասիրության արդյունքներն ամփոփելուց հետո:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ

1. **Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում** ***(Վերաբերում է նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը)***

Սոցիալական որևէ խումբ ունեցող անձանց ՀՀ-ից տարբեր ժամանակահատվածներով բացակայությունը ազդում է ընտանիքի անապահովության միավորի վրա, ուստի, համաձայն «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի» 51-րդ կետի, փոփոխության դեպքում շահառու հանդիսացողը պետք է տեղյակ պահի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը, որոնց հիման վրա իրականացվում է հաշվարկվող նպաստի վերահաշվարկ:

Արտաքին հաստատմամբ ստացված տեղեկատվության ուսումնասիրություններից, վերլուծություններից, վերակատարումներից և համադրումներից հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Թվով 52 Սոցիալական աջակցության տարածքային գրասեյակներում (այսուհետ՝ ՍԱՏԳ) հաշվառված 2148 ընտանիքների 2603 սոցիալական որևէ խումբ ունեցող անդամներ 31.12.2018թ.-ի դրությամբ, 90-ից ավելի օրեր բացակայել են ՀՀ-ից: Նշված ընտանիքներին 2018 թվականին վերոնշյալ անձանց բացակա լինելու ժամանակահատվածներում վճարվել է ընդհանուր առմամբ 326284.0 հազար դրամ ընտանեկան կամ սոցիալական նպաստ, կամ հրատապ դրամական օգնություն:

2. Թվով 53 ՍԱՏԳ–ներում հաշվառված 1337 ընտանիքների 2091 սոցիալական որևէ խումբ ունեցող անդամներ 31.12.2018թ.-ի դրությամբ բացակայել են ՀՀ-ից (2017-2018 թթ-ի ընթացքում ՀՀ-ից դուրս եկած՝ 31.12.2018 թ.-ի դրությամբ չվերադարձած): Նշված ընտանիքներին 2018 թվականին վերոնշյալ անձանց բացակա լինելու ժամանակահատվածներում վճարվել է ընդհանուր առմամբ 181,777.0 հազար դրամ ընտանեկան կամ սոցիալական նպաստ, կամ հրատապ դրամական օգնություն: Միաժամանակ, թվով 49 ՍԱՏԳ–ներում հաշվառված, 2018 թվականի ընթացքում ընտանեկան կամ սոցիալական նպաստ, կամ հրատապ դրամական օգնություն վճարված, սոցիալական որևէ խումբ ունեցող 454 անձերի վերաբերյալ ՀՀ վերադառնալու մասին տեղեկատվությունը բացակայում է (մինչև 2017 թվականը ՀՀ-ից դուրս եկած՝ 31.12.2018թ.-ի դրությամբ չվերադարձած):

Առկա է 508,061.0 հազար ՀՀ դրամ ռիսկ, որ շահառու հանդիսացող ընտանիքներում տեղի է ունեցել փոփոխություն, որը պատշաճ կերպով չի ծանուցվել սոցիալական աջակցության տարածքային մարմին:

Առաջարկ

ՍԱԾ-ին առաջարկում ենք ներդրել այնպիսի ներքին վերահսկողության համակարգ, որն առնվազն եռամսյակ մեկ կհամադրի ՀՀ սահմանահատումների վերաբերյալ տեղեկատվության բազայի թարմացված տվյալները շահառու հանդիսացող ընտանիքների անդամների ցանկի հետ, իսկ հայտնաբերված բացակայությունների հանդեպ կիրականացվեն հավելյալ ստուգման և մոնիթորինգի գործընթացներ:

Ղեկավարության արձագանք

Սույն արձանագրությունը (արձանագրվածը) չի մտնում Ծառայության իրավասությունների շրջանակի մեջ:

2. ***Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում*** **(Վերաբերում է նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը)**

ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Ընտանիքների ապահովության գնահատման» կարգով սահմանված ընտանիքների անապահովության աստիճանի որոշմամբ և միավորի գնահատմամբ կատարված համապատասխան համադրություններով, ինչպես նաև՝ համապատասխան վերլուծական ընթացակարգերով հայտնաբերվել են անհամապատասխանություններ սոցիալական ապահովության տարածքային թվով՝ 24 գրասենյակների նպաստառուների 70 գործերում (8,881.5 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով), մասնավորապես՝

1.Թվով 46 դեպքերում ընտանիքում Ա34 և/կամ Մ45 ծածկագրերով անձի ծնողների միջև գրանցվել է փաստացի ամուսնություն, որից հետո շահառուն շարունակել է ստանալ նպաստի գումարները:

2. Թվով 17 դեպքերում ընտանիքում Ա34և/կամ Մ45 ծածկագրերով անձի ծնողը ամուսնացել է այլ անձի հետ, սակայն շահառուն շարունակել է ստանալ նպաստի գումարները:

3. Թվով 7 դեպքերում ընտանիքում Ա34 և/կամ Մ45 ծածկագրերով անձը ամուսնացել է, հաշվառվել է ներկա և շահառուն ստանում է նպաստի գումարները:

Հաշվի առնելով, որ ամուսնանալու պարագայում փոխվում է Ա34 (ամուսնալուծված անձի երեխա) և/կամ Մ45 (միայնակ մոր երեխա) կարգավիճակը, որի հիման վրա է որոշվում նպաստի տրամադրման փաստը, առկա է ռիսկ, որ կարգավիճակի փոփոխության նկատմամբ ոչ պատշաճ հսկողական համակարգի բացակայություն պարագայում կարող են առաջանալ չհիմնավորված նպաստների

վճարման դեպքեր: Թվով հիմնավորված նպաստների վճարման դեպքեր: Ռիսկի ընդհանուր գումարը հաշվետու ժամանակաշրջանի համար 2,349.0 հազար ՀՀ դրամ գումարը գնահատվում ռիսկային, իսկ թվով 19 ընտանիքների մոտ առաջացած 395,500 ՀՀ դրամ գումարը, որից 17500.0 դրամը ետ է գանձված, իր մեջ պարունակում է հնարավոր խեղաթյուրումների ռիսկեր:

Առաջարկ

ՍԱԾ-ը Նախարարության հետ համատեղ պետք է ներդնի այնպիսի ներքին հսկողության համակարգ, որը պատշաճ կերպով և ժամանակին կհայտնաբերի ամուսնական կարգավիճակի փոփոխությունները և դրանց ազդեցությունը Ա34 (ամուսնալուծված անձի երեխա) և/կամ Մ45 (միայնակ մոր երեխա) կարգավիճակի փոփոխման հարցում՝ առկա անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները բացառելու նպատակով:

Ղեկավարության արձագանք

Արձագանքը բացակայում է:

ՀՄՊ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ՀՄՊ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԵՎ 25.11.1998 Թ.ՀՕ-258 ՕՐԵՆՔԻ 34.1 ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՍԱԾ-ը չի տիրապետում ՀՀ պաշտպանության նախարարության մասով կանխիկ վճարման դեպքերում (3856 շահառու՝ 1320195,2 հազար դրամ վճարած գումարով) և Արցախի Հանրապետության Պաշտպանության Բանակի մասով (8683 շահառու՝ 2901976,9 հազար դրամ վճարած գումարով) շահառուների կազմի վերաբերյալ որևէ տեղեկատվության:Գումարները ՍԱԾ-ը փոխանցել է ՀՀ պաշտպանության նախարարարության գլխավոր ֆինանսիստի ամենամսյա գրությունների համաձայն ներկայացված հայտերի հիման վրա՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության Պաշտպանական Բանակի համապատասխան հաշվեհամարներին, ընդ որում նշված հայտերի հիման վրա գումարներ է փոխանցվել ոչ միայն քննարկվող ծրագրի շահառուներին, այլ նաև՝ կենսաթոշակների և թաղման նպաստների վճարման նպատակով: Կանխիկ վճարման շրջանառությունը 2018 թվականին 2017 թվականի համեմատ ՀՀ պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կտրվածքներով ընդամենը նվազել է 2062 շահառուներով և 411072,3 հազար դրամ վճարած գումարներով: Արցախի Հանրապետության Պաշտպանության Բանակի զինծառայողների պարգևավճարների կանխիկ վճարման շրջանառությունը 2018 թվականին 2017 թվականի հետ համեմատ նվազել է 130 շահառուներով և 48556,0 հազար դրամով, սակայն ամբողջ կազմը՝ 8683 շահառուներով և 2901976,9 հազար դրամ տարեկան պարգևավճարների տարեկան ֆոնդով, ինչպես նախկինում, այնպես էլ՝ 2018 թվականին, ներառված է եղել կանխիկ վճարման համակարգում: ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների պարգևավճարների վճարման կանխիկ շրջանառությունը 2018 թվականին 2017 թվականի համեմատ նվազել է 1932 շահառուներով (ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների համակարգի ընդհանուր շահառուների 50.1 %-ը) և 362483,3 հազար դրամ տարեկան գումարով, այնուամենայնիվ, 3856 շահառուների 1320195,2 հազար դրամ տարեկան պարգևավճարների գումարները վճարվում են կանխիկ տարբերակով:

Առաջարկ

Առաջարկվում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների պարգևավճարների վճարման կանխիկ շրջանառությունը 3,856

շահառուներով և 1,320,195.2 հազար ՀՀ դրամով, ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի զինծառայողների պարգևավճարների կանխիկ վճարման շրջանառությունը՝ 8,683 շահառուներով և 2,901,976.9 հազար դրամ **տարեկան** պարգևավճարների տարեկան ֆոնդով, անցնել անկանխիկ վճարման՝ գործող և հետագա հնարավոր ռիսկերի նվազեցման նպատակով:

Ղեկավարության արձագանք

Արձանագրության մեջ տեղ գտած հանգամանքները դուրս են ծառայության իրավասությունների շրջանակից:

2. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում **(Վերաբերում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմա-բժշկական հանձնաժողովին և Նախարարության բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալությանը)**

Հաշվեքննության ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից Կենտրոնական ռազմա-բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿՌԲՀ) և Նախարարության բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ ԲՍՓԳ) ստացվել է 129 շահառուների անձնական փաստաթղթային գործերի վավերացված պատճենները: Նշված գործերի ստուգումից պարզվեց, որ ԿՌԲՀ–ի թվով 7 և ԲՍՓԳ-ի թվով 2 շահառուների հիմնավորող փաստաթղթերի, անձնական գործերի բացակայությամբ 2018 թվականին վճարված ընդհանուր 5040,0 հազար դրամ պարգևավճարները հնարավոր չի եղել ենթարկել հաշվեքննության:

Առաջարկ

Առաջարկում ենք իրականացնել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, համաձայն որոնց պարգևավճարներ ստացող շահառուների անձնական գործերի առկայության և փոփոխությունների նկատմամբ իրավասությունները, դրանց վճարումների և գումարաչափերի հսկողա-վերահսկողական մեխանիզմները պատվիրակել ՀՀ պաշտպանության նախարարության Զինծառայողների սոցիալական ապահովության վարչությանը, քանի որ հիշատակված շահառուների մասով թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կենտրոնացված է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում, իսկ պարգևավճարների գումարների բացառապես փոխհատուցումը գտնվում է ՍԱԾ-ի իրավասության ներքո:

Ղեկավարության արձագանք

Արձանագրության մեջ տեղ գտած հանգամանքները դուրս են ծառայության իրավասությունների շրջանակից:

3. ***Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում*** **(Վերաբերում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմա-բժշկական հանձնաժողովին և Նախարարության բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալությանը)**

ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Կենսաթոշակ վճարելու կարգի» 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումներն են «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության տարածքային գործակալությունները, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումները»: Հաշվեքննության ընթացքում կատարվել են փաստաթղթային ուսումնասիրություններ, վերակատարումներ և վերլուծություններ ՍԱԾ-ում առկա և արտաքին հարցմամբ ստացված 129 անհատական գործերի մասով, որոնց արդյունքում արձանագրվել է, որ որոշմամբ սահմանված այն դեպքերը, երբ զինծառայողները ստացել են հաշմանդամության կարգեր, որոնց հիման վրա իրականացվել է պագևավճարների գումարի հաշվարկը և վճարումը:

ՍԱԾ-ում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թվով 6 դեպքերում պարգևավճար է տրամադրվել ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա պարգեվավճարի չափերը՝ ըստ պարգեվավճար ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, պարգեվավճար նշանակելու եվ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն Որոշման Հավելված 1-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն («Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում ԽՍՀՄ զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կամ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձինք»), մինչդեռ նշված դեպքերում նրանց պարգևավճարները պետք է վճարվեին համաձայն Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի («ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք»): Վերոնշյալ 6 դեպքերի համար ավել վճարված գումարը կազմել է 1776,0 հազար դրամ:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ թվով 26 դեպքերում բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՍՓՀ) կողմից նախկինում տրված

եզրակացություններով նշված է, որ հաշմանդամությունը ձեռք է բերվել ծառայության ընթացքում, այդ թվում նաև՝ ընդհանուր հիվանդություններով: Մինչդեռ հետագայում նոր եզրակացություններում, առանց հիմքերի նշվել է, որ հաշմանդամությունը ձեռք է բերվել ծառայողական պարտականությունները կատարելիս՝ Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի համապատասխան: Ընդ որում, հայտնաբերվել են ԲՍՓՀ-ի և ԿՌԲՀ-ի որոշումների միջև ակնհայտ անհամապատասխանություններ՝ հաշմանդամության ծագման, պատճառական կապի հետ կապված. ինչպես տարեկան կտրվածքներով, այնպես էլ՝ անժամկետ որոշումների կայացման ժամանակ փաստաթղթային հիմնավորումներում առկա են անորոշ հղումներ, կանխամտածված սխալ որոշումներ կամ նախկին որոշումների չհիմնավորված փոփոխություններ: Արդյունքում ավել է վճարվել 8448,0 հազար դրամ գումար:

Առաջարկ

Առաջարկվում է վերականգնել թվով 9 շահառուների անձնական գործերը, հակառակ դեպքում հիշատակված գումարաչափը ենթակա է ետգանձման ՀՀ պետական բյուջե:

Հստակեցնել ԲՍՓՀ-ի և ԿՌԲՀ-ի գործառույթները շահառուների հաշմանդամության կարգերի որոշման, պատճառական կապերի հիմնավորման, գնահատման և հիվանդությունների որակավորման աշխատանքներում: ԲՍՓՀ-ներին վերագրված է հիվանդության և հաշմանդամության կարգերի որոշման գործառույթը, իսկ հաշմանդամության առաջացման պատճառական կապերի հաստատումը ԲՍՓՀ-ներից անհրաժեշտ է վերապահել ԿՌԲՀ-ին՝ գնահատման ռիսկային մոտեցումներից, անհամապատասխանություններից և խեղաթյուրումներից խուսափելու համար: «Պարտականությունները կատարելիս», «Ծառայության ընթացքում» և «Ընդհանուր հիվանդություն» որոշումների եզրույթները, հիվանդությունների ձեռքբերման, հաշմանդամության կարգերի հաստատման և պարգևավճարների ներկայացման ԲՍՓՀ-ի և ԿՌԲՀ-ի որոշումների միջև խզված պատճառական կապի հստակ հիմնավորելու, տարբեր ժամանակահատվածներում կայացված իրարամերժ որոշումները բացառելու,պարգևավճարների նշանակման տարեկան և/կամ անժամկետ վերջնական հաստատումների անհամապատասխանությունները բացառելու նպատակով ԲՍՓՀ-ի և ԿՌԲՀ-ի իրավասությունները և գործառույթները ենթակա են վերանայման:

Ղեկավարության արձագանք

Ծառայության իրավասությունների շրջանակին առնչվող թիվ 6 շահառուներից 3-ի գծով դեպքերը ընդունված են, մնացած մասով արձանագրության մեջ տեղ գտած հանգամանքները դուրս են ծառայության իրավասությունների շրջանակից:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում ***(Վերաբերում է նաև ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին)***

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստները, ինչպես նաև օրենքով սահմանված մայրության նպաստը վճարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին(բացառությամբ օրենքի 22-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված դեպքերի)»: Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված է, որ «Նպաստի՝ ՀՀ պետական բյուջեից վճարման ենթակա գումարները գործատուն վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի հաշվին:

ՍԱԾ–ում հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ2018 թ.ին մայրության նպաստի մասով թվով 1,472 կազմակերպությունների տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չի եղել պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար: Հետևաբար, համաձայն սահմանված կարգով ներկայացված տեղեկանքների, ՍԱԾ-եկամտային հարկի չբավարարող մասը, որը վճարվել էր գործատուի միջոցներից, 307,884.4 հազար դրամ գումարի չափով փոխհատուցել է համապատասխան գործատուներին:Միևնույն ժամանակ ՀՀ ՊԵԿ-ը ՍԱԾ-ից պետք է պահանջեր և ստանար միայն եկամտային հարկի հաշվին պակասեցված գումարների մասը: Մինչդեռ հաշվեքննության ընթացքում ՍԱԾ-ում նշված կազմակերպությունների մասով հարկային մարմիններից ստացված տեղեկանքների և ՀՀ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համադրմանարդյունքում պարզվեց, որ ՀՀ ՊԵԿ-ը ՍԱԾ-ից համապատասխան գրություններով պահանջել և ստացել է ոչ միայն մայրության նպաստի եկամտային հարկով պակասեցված մասը, այլ մայրության նպաստի ողջ գումարի չափը՝608,501.3 հազար դրամ:Արդյունքում ՀՀ ՊԵԿ-ին ավել է փոխանցվել գործատուներին ՍԱԾ-ի կողմից փոխհատուցված 307,884.4 հազար ՀՀ դրամը:

Առաջարկ

ՍԱԾ-ում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել ՊԵԿ-ին վճարվող գումարների անհամապատասխանությունները, ինչպես նաև ապահովել անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետական բյուջեի համապատասխան հաշվին:

Ղեկավարության արձագանք

Համաձայն «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն: ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 2 հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ անաշխատունակության և մայրության նպաստների գումարից եկամտային հարկը հաշվարկվում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» սահմանված չափով և կարգով: Որոշման N 3 հավելվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ գործատուն վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների (այսուհետ՝ նպաստ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարը վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի հաշվին՝ վճարված նպաստի գումարի չափով՝ նվազեցնելով տվյալ ամսվա համար վճարվող եկամտային հարկի գումարները: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի գումարները բավարար չեն նպաստը վճարելու համար, ապա գործատուն նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին վճարվող գումարների պակասող մասը (այսուհետ՝ գործատուին փոխհատուցման ենթակա գումար) վճարում է իր միջոցներից, որը գործատուին փոխհատուցում է Սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն): Հարկային մարմինը 10 օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման համապատասխանությունն Օրենքին, հաստատում (կնքում) է տեղեկանքը և վերադարձնում գործատուին՝ օրենսդրությամբ սահմանված դեպքում նշելով փոխհատուցման ենթակա գումարը կամ գրավոր մերժում է տեղեկանքը հաստատելը՝ նշելով մերժման պատճառը և գործատուի հետագա գործողությունները: Ինչպես արդեն տեղեկացվել է Սոցիալական ապահովության ծառայությունը 30.01.2019թ. N ԱՊ/ԿԲ-2/2146-19 գրությամբ խնդրի կարգավորման համար դիմել է Պետական եկամուտների կոմիտե: Պետական եկամուտների կոմիտեի 04.02.2019թ. N 03/4-4/6727-19 գրությամբ տեղեկացվել է, որ գործատուների մոտ եկամտային հարկի հաշվին ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով տեղում կատարված ծախսերի

ֆինանսավորման ենթակա գումարներից ավել փոխանցված գումարը 2018 թվականի համար կազմել է 302,516.0 հազ. դրամ, 2017 թվականի համար՝ 280,633.1 հազ. դրամ (նվազեցման ենթակա գումարը ընդհանուր կազմում է 583,149.1 հազ. դրամ): Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է 2019 թվականի հունվար, իսկ չբավարարվելու դեպքում հետագա ամիսների համար վճարվելիք գումարներից նվազեցնել 583,149.1 հազ. դրամ: Այս պահի դրությամբ Պետական եկամուտների կողմից գումարն ամբողջությամբ նվազեցվել է:

2. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում ***(Վերաբերում է նաև ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին)***

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018թ. ընթացքում գործատուների մոտ եկամտային հարկի հաշվին ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով տեղում կատարված ծախսերի ֆինանսավորման ենթակա գումարների մասին տեղեկատվությունը ԲՊՌ տեղեկատվական բազայի հետ համադրվել և հայտնաբերվել են թվով 6 արական սեռի անձիք, որոնք ստացել են մայրության նպաստ՝ 1,498,957.0 դրամ ընդհանուր գումարով:

Առաջարկ

ՊԵԿ-ում և ՍԱԾ-ում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգեր, որոնք ԲՊՌ-ի շտեմարանների հետ համադրելիս կբացառեն արական սեռի անձանց մուտքը մայրության նպաստի համակարգ:

Ղեկավարության արձագանք

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Նորոշման իրավակարգավորումներին համաձայն՝ վարձու աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվական բազայից, որի վարողը հարկային մարմինն է (ընդ որում՝ այս բազայում վարձու աշխատողի վերաբերյալ տեղեկատվությունը ապահովում է գործատուն՝ համապատասխան գրանցման հայտով): Ծառայության կենսաթոշակների, նպաստների և դրամական այլ վճարների վարչությունը, սեփական նախաձեռնությամբ, գործատուներից տեղեկացվել է, որ «2018 թվականի ընթացքում մայրության նպաստ ստացած արական սեռի անձանց ցուցակ»-ից 2-6 կետերի դեպքերը սխալ ներկայացված գրանցման հայտերի արդյունք են և դրանց արդեն տրվել են համապատասխան լուծումներ, իսկ մեկ այլ դեպքում՝ «արական» նշումը բազա է ներմուծվել ՀՀ բնակչության պետական ռեգիստրից (Ձեզ է ներկայացվում համապատասխան տեղեկանքը): Հարկ է

նկատի ունենալ, որ վարձու աշխատողների նպաստների նշանակման և վճարման իրավաչափությունը ստուգելու իրավասություն առկա իրավանորմերի շրջանակներում Ծառայությանը վերապահված չէ:

3. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

2018թ. ընթացքում գործատուների մոտ եկամտային հարկի հաշվին ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով տեղում կատարված ծախսերի ֆինանսավորման ենթակա գումարների մասին տեղեկատվական բազայում առկա են մեկ անձին բազմակի անգամ մայրության նպաստի գումարի վճարումներ՝ ըստ ՍԱԾ-ի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվության: Հայտնաբերվել են դեպքեր, որտեղ կատարվել են նույն անձանց մայրության նպաստի բազմակի վճարումներ՝ 43,482,681.0ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Առաջարկ

ՊԵԿ-ում և ՍԱԾ-ում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգեր, որոնք ՊԵԿ-ի ներկայացված բազայում կբացառի մեկ անձին բազմակի անգամ մայրության նպաստի գումարի վճարումները:

Ղեկավարության արձագանք

Տեղեկացվում է, որ ներկայացված ցանկում հիշատակված 39 դեպքից գործատուի կողմից ուղղում է կատարվել 24 դեպքով, 13 դեպքով տեղեկատվություն կներկայացվի ՊԵԿ-ին՝ լրացուցիչ ուսումնասիրման համար, իսկ 2 դեպքով գործատուն տվել է ճշտում և չեղարկել մայրության նպաստը: Հիմք ընդունելով Պետական եկամուտների կոմիտեի ՀՀ հաշվեքննիչ պալատին ուղղված 27.08.2019թ. N 01/4-3/51004-19 գրության՝ տեղեկացվում է, որ Ծառայության կողմից ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ ավել վճարված գումարները նվազեցնելու ուղղությամբ: *Միաժամանակ տեղեկացվում է, որ 2019 թվականի հունվար ամսից սկսած* եկամտային հարկի հաշվին նվազեցված նպաստների գումարի հաշվարկը իրականացվում է հետևյալ կերպ՝գործատուներ, որոնց եկամտային հարկը գերազանցում է վճարված նպաստի գումարը՝ հաշվարկի համար կիրառվել է վճարված նպաստի գումարը և գործատուներ, որոնց եկամտային հարկը պակաս է վճարված նպաստի գումարից՝ հաշվարկի համար կիրառվել է հաշվարկված եկամտային հարկի գումարը:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒԻ, ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՌՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի(այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ հաստատությունը»: Հաշվեքննության ընթացքում կատարվեց համադրում նշված ծրագրի շահառուների և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից տրամադրված բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունների (ԲՍՊՊԿ) կողմից 2018թ.ին հուղարկավորված թվով 113 անձանց տվյալների միջև:

Արդյունքում պարզվեց, որ թվով 3 դեպքերում չնայած հուղարկավորությունը կատարվել է «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից, սակայն տրամադրվել է նաև թաղման նպաստ՝ 600.0 հազար դրամ ընդհանուր արժեքով: Նշված 3 դեպքերում նպաստը ստացել է մեկ անձ:

Առաջարկ

ՍԱԾ-ում անհրաժեշտ է ներդնել այնպիսի ներքին հսկողական մեխանիզմներ, որոնց կիրառմամբ կբացառվեն «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կազմակերպված հուղարկավորությունների պայմաններում թաղման նպաստների տրամադրման դեպքերը՝ հնարավոր խեղաթյուրումների ռիսկերից խուսափելու նպատակով:

Ղեկավարության արձագանք

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ կազմակերպությունը: ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 9-ով սահմանված՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ նշանակելու և վճարելու» կարգի 20-րդ կետում նշված է այն կազմակերպությունների ցանկը, որտեղ կենսաթոշակառուներին նշանակվում և վճարվում է կենսաթոշակ: Նշված ցանկում «Վանաձորի տարեցների

տուն» հիմնադրամը նախատեսված չէ (նախատեսված են՝ «Նորքի տուն-ինտերնատ» «Թիվ 1 տուն-ինտերնատ» «Գյումրու տուն-ինտերնատ» Երևանի «Մանկան տուն» «Գավառի մանկատուն» «Վանաձորի մանկատուն»: պետական ոչ առևտրային կազմակերպությունները):

2. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում *(Վերաբերում է նաև ՀՀ Պետական եկամոտների կոմիտեին)*

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ առկա է մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես, թվով 6 անձինք ստացել են 103 թաղման նպաստ՝ 20,600.0 հազար դրամ ընդհանուր գումարով: Ընդ որում

1 անձ ստացել է 69 թաղման նպաստ՝ 13,800.0 հազար դրամ ընդհանուր գումարով, որից

1 անձ՝ թվով 17 նպաստ՝ 3400.0 հազար դրամ գումարով,

1 անձ թվով 5 նպաստ՝ 1000.0 հազար դրամ գումարով,

3 անձ թվով 4-ական նպաստներ՝ յուրաքանչյուրը՝ 800.0 հազար դրամ գումարով:

Առաջարկ

Չնայած ՀՀ օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու քանակների վերաբերյալ, սակայն նշված հանգամանքը իր մեջ հնարավոր խեղաթյուրումների ռիսկեր է պարունակում: Այն բացառելու նպատակով անհրաժեշտ է պարզել այն հանգամանքները և իրավիճակները, որոնց պարագայում թաղման նպաստ ստանալու համար մեկ անձի մոտ կարող է հայտնվել բազմաթիվ մահվան վկայականներ և համապատասխան տեղեկանքներ:

Ղեկավարության արձագանք

Կենսաթոշակային օրենսդրության համաձայն, թաղման նպաստը վճարվում է հուղարկավորությունը կատարած անձին: Գործնականում այն կարող է վճարվել ցանկացած անձի, ով ներկայացրել է թաղման նպաստ նշանակելու գրավոր դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր (մահվան վկայականի բնօրինակը և այլն): Ընդ որում, կենսաթոշակային օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում մեկ անձի կողմից մեկից ավելի (տարբեր) մահվան դեպքերով թաղման նպաստ ստանալու հնարավորությունը: Վերը նշված մոտեցումը պայմանավորված է խնդրո առարկա նպաստի էությամբ. այն տրվում է հուղարկավորությունը կազմակերպած անձին և որևէ կերպ փոխկապակցված չէ հանգուցյալի գույքային իրավունքների հետ: Միաժամանակ,

անձի մոտ մահվան բազմաթիվ վկայականներ և համապատասխան տեղեկանքներ հայտնվելու հանգամանքները ճշտելու համար Ծառայությունը չունի համապատասխան լիազորություններ (իրավասություններ), սակայն, մեր կարծիքով, խնդրո առարկա դեպքում մահվան վկայականներն այդ անձանց մոտ հայտնվում են համապատասխան ծառայություններ մատուցելու շրջանակներում:

3. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում ՍԱԾ-ի և արտաքին հաստատմամբ ՀՀ արդարադատության նախարարության «Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» գործակալության տրամադրած տեղեկատվական բազաների համադրմամբ, ուսումնասիրվել է Նախարարության «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ ՊՈԱԿ) 2018թ.-ին մահացած շահառուների՝ հաստատություն ընդունելու գործընթացի իրավաչափությունը:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ թվով 4 շահառուների փաստաթղթերում բացակայել են դատարանների՝ խնամվողներին անգործունակ ճանաչելու մասին համապատասխան որոշումները, իսկ մեկ դեպքով խնամվողի փաստաթղթերում բացակայում են Նախարարության սահմանված ուղեգիրը, ՍԱԾ-ի տարածքային գործակալության գրությունը, հաստատություն ընդունման հրամանը և բաշխման կարգադրությունը: Խնամվողների հաստատություն ընդունման կանոնակարգերում նման գործընթաց չի սահմանված ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ:

Առաջարկ

ՊՈԱԿ–ում Բժշկասոցիալական փորձաքննության եզրակացությունների առկայության և անգործունակ ճանաչվելու մասին դատական որոշումների բացակայությունը իրենց մեջ հնարավոր անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ռիսկեր են պարունակում, ուստի առաջացնում է լրացուցիչ ուսումնասիրությունների և ստուգումների պահանջ:

Ղեկավարության արձագանք

Արձագանքը բացակայում է:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով սահմանվում է, որ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ «ՀՀ երկքաղաքացի նպաստառուի՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (ՀՀ բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում), ինչպես նաև ՀՀ բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու և մեկամսյա ժամկետում չհաշվառվելու դեպքում», 9-րդ ենթակետը սահմանում է, որ դադարեցումը տարածվում է «Նպաստառուին կամ նրա փոխարեն նպաստն ստանալու իրավունք ունեցող անձին 12 ամիս անընդմեջ նպաստ չվճարելու դեպքում», իսկ 13-րդ ենթակետով՝ դադարեցումը տարածվում է նաև «Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի՝ տասներկու ամիս անընդմեջ ՀՀ-ից բացակայելու դեպքում (եթե նպաստը վճարվում է նպաստառուի օրինական ներկայացուցչին)»:

Հաշվեքննության ընթացքում,հայտնաբերվել է թվով 36 Սոցիալական ապահովության տարածքային բաժիններում (ՍԱՏԲ) 119 շահառուների նպաստի կանխիկ վճարման 185 դեպք, որոնց վճարումները կատարվել են վերջիններիս՝ ՀՀ–ից փաստացի բացակայելու ժամանակահատվածում: Ընդհանուր վճարված գումարը կազմել է 3,439,840.0 դրամ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ հիշատակված 185 դեպքերում շահառուները ՀՀ-ից բացակայելու հանգամանքով պայմանավորված, չէին կարող կանխիկ տարբերակով ստանալ իրենց կենսաթոշակը, որը սահմանված կարգով տրամադրվում է յուրաքանչյուր ամսվա մինչև 20-ը ներառյալ:

Հաշվեքննողի կողմից համադրումների իրականացման ժամանակ որպես կենսաթոշակ ստանալու ժամկետ է դիտարկվել յուրաքանչյուր ամսվա 3-ից մինչև 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ներքոհիշյալ իրավական նորմերի պահանջների խախտումը առաջացնում է անհամապատասխանության և խեղաթյուրումների ռիսկ:

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ «Կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին»:

2. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 15-ի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 686-Ն որոշման «Կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը» Հավելված թիվ 1-ի 3-րդ գլխի 25–րդ կետը սահմանված է, որ «Կազմակերպությունը տվյալ ամսվա կենսաթոշակը վճարում է մինչև տվյալ ամսվա 20-ը և հիմնական պայմանագրով սահմանված կարգով, վճարման ցուցակի հիման վրա, կենսաթոշակների վճարման վերաբերյալ անձնավորված տեղեկատվություն է տրամադրում ծառայությանը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով»:

Առաջարկ

Առաջարկում ենք հայտնաբերված խեղաթյուրումների համար իրականացնել հետագա ուսումնասիրություններ, մասնավորապես, ստուգել կանխիկ տարբերակով կենսաթոշակը ստանալու փաստաթղթերի և ստորագրությունների իրավունակությունը:

Ղեկավարության արձագանք

Ծառայությունը, որպես ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման շրջանակներում ՍԷԿՏ համակարգից օգտվող, նշված համակարգից ստանում է անձի՝ որոշակի ժամանակահատվածի (3 ամիս, 6 ամիս, 9 ամիս, 12 ամիս) սահմանահատումների վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն, Ծառայությունը չի տնօրինում անձի՝ մինչև 3 ամիս բացակայությունների վերաբերյալ տեղեկատվությանը: Նշված 185 դեպքերի, ինչը համապատասխանում է 119 շահառուի, ուսումնասիրության արդյունքում, պարզվել է հետևյալը.

Ցանկում առկա 162 տողի (109 անձ) տվյալներով շահառուները բացակայել են ՀՀ-ից 3 ամսից պակաս ժամանակահատված:

Ցանկում առկա 20 տողի (11 անձ) տվյալներով շահառուները ՀՀ-ից բացակայել են 3 ամսից ավել ժամանակահատված, սակայն Ծառայության կողմից իրականացվող ընթացիկ համադրումների պահին ՍԷԿՏ համակարգից բացակայության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել՝ 3 ամիսը լրացած չլինելու պատճառաբանությամբ (շահառուները վերադարձել են ՀՀ տվյալ ամսվա մեջ, որի պատճառով հաջորդ ամսվա համադրման աշխատանքներ իրականացնելու պահին ՍԷԿՏ համակարգից ստացված տեղեկատվության համաձայն շահառուն գտնվել է ՀՀ-ում): Ցանկում՝ 3 ամսից ավելի բացակայության ժամանակահատված ունեցել է 1 անձ (ընդգրկել է 3 տող), ով պետական բյուջե վերականգնել է բացակայության ժամանակահատվածում (3 ամիս) ոչ իրավաչափ վճարված կենսաթոշակի գումարը՝ 48000 ՀՀ դրամ (անդորրագիրը կցվում է): Միաժամանակ, Ծառայությունը, կանխիկ եղանակով իրականացվող վճարումների ընթացքում առկա ոչ իրավաչափ դեպքերի բացահայտմանը և հետևանքները

վերացնելուն ուղղված շարունակական միջոցառումների շրջանակներում, վճարող կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքերում կիրականացնի նաև օրենքով նախատեսված այլ միջոցառումներ: